

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ	3-4
II. ԱՄՓՈՓԱԳԻՐ.....	5
III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	6
IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	7-8
V. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	9-30
VI. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ.....	31
VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ.....	32
VIII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	33

I. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը¹

Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի
թիվ 152-Ա որոշում:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարության միասնական սոցիալական
ծառայություն:

Հաշվեքննության առարկան

Պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և
ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

Հաշվեքննության առարկայի չափանիշները

«ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք,
«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք,
«Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք,
«Հանրային հատվածի կազմակերպությունների
հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք,
«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք,
«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք,
«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, «Ներքին
աուդիտի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2014
թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
կիրարկումն ապահովելու մասին» թիվ 145-Ն որոշում, ՀՀ
կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական
կենսաթոշակների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու
մասին» թիվ 665-Ն որոշում, ՀՀ կառավարայն 2021
թվականի դեկտեմբերի 23-ի «Ընտանիքում 3-րդ և
յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան
կապակցությամբ դրամական աջակցություն նշանակելու և
վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 2169-Ն որոշում
և այլ իրավական ակտեր:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի
դեկտեմբերի 30-ը ներառյալ:

¹ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն
Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կադրման
վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:

Հաշվեքննության կատարման ժամկետը	2025 հունվարի 8-ից մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը²	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական, համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանության համաձայն:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Հակոբ Միհրանյանը:

² «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների և ուղեցույցների վրա:

II. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ հիմնական փաստերը.

- ✓ Օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեից հատկացվող կենսաթոշակների և սոցիալական նպաստների հաշվապահական հաշվառում չի վարվում: Ծառայությունը վարում է միայն իր տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի (հիմնարկի պահպանման ծախսերի) հաշվապահական հաշվառումը:
- ✓ Ծառայության առանձին տարածքային կենտրոններում չեն պահպանվել՝ ընտանիքների անապահովության գնահատման արդյունքում, նպաստ նշանակելու կամ մերժելու որոշումները Նախարարության և Ծառայության կայքէջերում տեղակայելու վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջները:
- ✓ Առկա են դեպքեր, երբ Ծառայության տարածքային կենտրոնների կողմից դրամական աջակցություն նշանակելու կամ մերժելու վերաբերյալ որոշումները ընդունվել են օրենսդրությամբ սահմանված ժամկետից մինչև 95 օր ուշացումով:
- ✓ Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանությունները հանգեցրել են բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների փաստացի ծախսերի՝ 265,556.8 հազ. դրամ, դեբիտորական պարտքերի տարեսկիզբի ցուցանիշի՝ 991,557.4 հազ. դրամ և տարեվերջի ցուցանիշի՝ 452,921.6 հազ. դրամ գումարների չափերով խեղաթյուրումների³:

³ Հաշվապահական հաշվառման ֆինանսական հաշվետվությունների տվյալ խեղաթյուրումները ազդեցություն չունեն Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա, քանի որ «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով (24-րդ հոդված) Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը, ներառյալ կարծիքը, ներկայացնում է կառավարության կողմից ներկայացվող պետական բյուջեի կատարման վերաբերյալ: Իսկ «Բյուջեային համակարգի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներառում է՝ «պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի, ինչպես նաև հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ»:

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ⁴

Հաշվեքննության ընթացքում հասանելի էլեկտրոնային հարթակներից, ինչպես նաև Ծառայությունից, ստացվել է բավարար տեղեկատվություն՝ հաշվեքննությունն իրականացնելու համար:

Արձանագրված անհամապատասխանություններն ու այլ փաստերը նկարագրված են սույն ընթացիկ եզրակացության «Արձանագրված անհամապատասխանությունները» V-րդ և «Արձանագրված այլ փաստեր» VI-րդ բաժիններում:

⁴ Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնում է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:

IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծառայությանը, որպես ծրագրերի կատարողի, 2024 թվականի պետական բյուջեի տարեկան պլանով նախատեսվել է 563,705,622.40 հազ. դրամի ծախս, ճշտված պլանը կազմել է 620,751,717.79 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 598,964,036.03 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 598,504,069.87 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 598,122,952.38 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 96.41%:

Ըստ բյուջետային ծրագրերի ֆինանսական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Ծառայության 2024 թվականի պետական բյուջեի տարեկան ցուցանիշները (հազ. դրամ)

Ծրագիր		Հաշվետու ժամանակա հատվածի պլան	Հաշվետու ժամանակա հատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
Ընդամենը		563,705,622.40	620,751,717.79	598,504,069.87	598,122,952.38
1005	Պարգևավճարներ և պատվովճարներ	11,104,700.00	11,107,200.00	10,792,987.77	10,792,843.77
1011	Անապահով սոցիալական խմբերին աջակցություն	31,744,199.10	27,523,377.30	23,880,910.19	23,581,508.35
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	-	94,500.00	94,496.53	95,048.53
1068	Ժողովրդագրական վիճակի բարելավում	68,263,726.00	67,419,182.00	64,330,681.38	64,326,902.78
1082	Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	22,557,126.20	22,857,126.20	22,834,484.70	22,834,484.70
1088	Զբաղվածության ծրագիր	580,246.50	1,727,010.20	1,356,031.54	1,356,031.54
1098	Բնակարանային ապահովում	2,602,500.00	6,626,500.00	6,301,102.03	6,301,102.03

Ծրագիր		Հաշվետու ժամանակա հատվածի պլան	Հաշվետու ժամանակա հատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
1102	Կենսաթոշակային ապահովություն	341,636,143.00	344,977,143.00	337,695,667.53	337,637,841.50
1117	Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	7,128,838.90	7,135,699.09	7,042,516.69	7,039,825.20
1141	Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն	-	136,336.70	117,855.18	117,855.18
1160	Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն	1,872.10	152,920.90	68,454.42	68,454.42
1168	Արվեստների ծրագիր	32,970.00	32,970.00	29,107.16	29,107.16
1184	Ավանդների և այլ փոխհատուցումներ	1,515,000.00	1,515,000.00	803,444.40	789,176.40
1205	Սոցիալական ապահովություն	61,538,300.60	63,772,302.40	62,525,149.91	62,521,590.38
1225	Ճգնաժամների հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	15,000,000.00	65,674,450.00	60,631,180.44	60,631,180.44

Վ. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 Առկա է անհամապատասխանություն՝

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հետևյալ պահանջների հետ.

«1. Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, զուտ ակտիվների (սեփական կապիտալի) վիճակի ու շարժի, ինչպես նաև հասույթների և ծախսերի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով»:

2. Կազմակերպությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում»:

ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հուլիսի 23-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 463-Ն հրամանով հաստատված ժամանակացույցով հաշվապահական հաշվառման նոր համակարգին Ծառայության անցման համար սահմանված՝ 2017 թվականի հունվարի 1-ը ժամկետի հետ:

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 26-ի թիվ 313-Ն որոշման⁵ N 1 հավելվածով սահմանված Կարգի 5-րդ կետի համաձայն՝ «5. Հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի միջոցով հաշվապահական հաշվառումը պետք է վարվի Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջներով՝ կիրառելով հաշվային պլանում ներկայացված հաշվապահական թղթակցությունները»:

Ծառայությունում ներդրված է Ստանդարտի⁶ պահանջներին և հաշվային պլանին⁷ համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագիրը՝ հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգը:

Այդուհանդերձ, Ծառայությունը, հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածի վերջի դրությամբ, դեռևս չի ապահովել ամբողջական անցումը

⁵ «Հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերի՝ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանության որոշման կարգը և դրանց ավտոմատացված համակարգերի նկատմամբ պահանջները սահմանելու մասին»

⁶ Հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 725-Ն հրամանով:

⁷ Հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 9-ի թիվ 207-Ն հրամանով:

հաշվապահական հաշվառման նոր համակարգին: Ծառայության հաշվապահական հաշվառման համակարգում, Ստանդարտի պահանջներով և հաշվային պլանի համապատասխան հաշիվներով վարվում են միայն Ծառայության տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի (հիմնարկի պահպանման ծախսերի) հաշվապահական հաշվառումը, իսկ պետական բյուջեով հատկացվող սոցիալական նպաստների և կենսաթոշակների գործառնությունները հաշվապահական հաշվառման համակարգում չեն ընդհանրացվում: Արդյունքում, Ծառայության հաշվապահական հաշվառման ֆինանսական հաշվետվություններում⁸ բացակայում են սոցիալական նպաստների, կենսաթոշակների գծով, հաշվետու տարվա ֆինանսական հոսքերի, ֆինանսական վիճակի, զուտ ակտիվներում (սեփական կապիտալում) փոփոխությունների, հասույթների և ծախսերի վերաբերյալ պարտադիր բացահայտման ենթակա տեղեկատվությունը (ցուցանիշները), որն էլ հանգեցրել է Ծառայության ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրման: Օրինակ, ըստ Ծառայության 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվետվության սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով փաստացի ծախսերը կազմել են 589.2 մլրդ դրամ, մինչդեռ հաշվապահական հաշվառման համակարգում ընդհանրացվում են միայն հիմնարկի պահպանման՝ 7.0 մլրդ դրամ ընդհանուր գումարով փաստացի ծախսերը և այլն:

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

Դեռևս 2013 թվականին, Ծառայությունում հաշվապահական հաշվառման գործառնությունները կենտրոնացնելու նպատակով՝ ներդրվել է ավտոմատացված հաշվապահական ծրագրային փաթեթ: 2016 թվականին, ՀՀ ֆինանսների նախարարի 23.07.2014թ. N 463-Ն հրամանով սահմանված նոր հաշվային պլանին համապատասխանելու համար, այդ ծրագրում իրականացվել են համապատասխան փոփոխություններ: Նշված ծրագիրը շահագործվել է մինչև 2021 թվականի սեպտեմբեր ամիսը, երբ ուժի մեջ են մտել Ծառայության գործառնությունների էական փոփոխություններ առաջացրած նորմատիվ ակտեր:

2021 թվականին «Սոցիալական աջակցության մասին» օրենքում և դրան փոխկապակցված իրավական ակտերում իրականացված փոփոխությունների արդյունքում (ՀՀ օրենք՝ ՀՕ-97-Ն, խմբ. ՀՕ-70-Ն, 03.02.2021թ., ՀՀ կառավարության 25.02.2021թ. N 251-Ն որոշմամբ) Ծառայությանը վերապահվեցին նոր լիազորություններ և գործառնություններ: Գործառնությունների այս ընդլայնումը պահանջեց հաշվապահական հաշվառման համակարգի կատարելագործում՝ նոր պայմաններին համապատասխանեցնելու նպատակով:

⁸ Հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի հունվարի 30-ի թիվ 27-Ն հրամանով:

Արդյունքում, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 26-ի թիվ 313-Ն որոշման N 1 հավելվածի և «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ 2021թ. սեպտեմբերին Ծառայությունում ներդրվեց «ՀԾ Ձեռնարկություններ» հաշվապահական նոր, արդիականացված ծրագրային համակարգը: Ներդրված համակարգը ներկայումս գործում է, որով իրականացվում է հաշվապահական հաշվառումը, որտեղ դեռևս ներառված չեն կենսաթոշակների և սոցիալական նպաստների հաշվառման բաղադրիչը, ինչը պայմանավորված է նշված վճարային ծրագրերի մեծ ծավալներով և առանձին կառավարվելու հանգամանքով:

Տեղեկացվում է, որ կենսաթոշակների և նպաստների հաշվառումը վարվում է առանձին ծրագրով, որի հիման վրա կազմվում են ֆինանսական հաշվետվությունները և ներկայացվում լիազոր մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը):

Հաշվի առնելով Հաշվեքննողի դիտարկումները՝ նախատեսվում է 2025 թվականի առաջին կիսամյակից հետո սոցիալական բոլոր ծրագրերի (ներառյալ՝ կենսաթոշակների և նպաստների վճարների) հաշվապահական հաշվառումը իրականացնել մեկ ընդհանուր «ՀԾ Ձեռնարկություններ» հարթակով:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ ընդունվել է ի գիտություն:

5.2 ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓԱՍՏԱՑԻ ԾԱԽՍԻ ԵՎ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ստանդարտի պահանջներով և հաշվային պլանի համապատասխան հաշիվներով կենսաթոշակների և սոցիալական նպաստների հաշվապահական հաշվառում չվարելը հանգեցրել է Ծառայության պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություններում իրավական ակտերի պահանջներից տարբերվող՝ փաստացի ծախսի և դեբիտորական պարտքերի արտացոլման: Այսպես.

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանով հաստատված⁹

⁹ Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման, ամփոփման ընդհանուր պայմանները, հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգը հաստատվելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 176-Ն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի մարտի 28-ի N 324-Ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին

- «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» հաշվետվության օրինակելի ձև 2-ի լրացման պահանջների 9-րդ կետի նկատմամբ, որի համաձայն աղյուսակի «Փաստացի ծախսի» «ԺԱ» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները, հաշվարկված աշխատավարձի ու կրթաթոշակների գծով կատարված ծախսերը,

- «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների» հաշվետվության օրինակելի ձև 4-ի տարեսկզբի և տարեվերջի դեբիտորական պարտքերի սյունակներում համապատասխան ցուցանիշները լրացնելու պահանջների հետ:

5.2.1. (1011-12001) «ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՌԻԴԴԱԾ ՆՊԱՍՏՆԵՐ» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ծառայության 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվետվության համաձայն տարեկան պլանը կազմել է 31,411,296.2 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 27,326,174.4 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 23,863,706.2 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 23,759,673.6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 23,457,710.4 հազ. դրամ: Դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 3,342.5 հազ. դրամ, տարեվերջին՝ 305,305.7 հազ. դրամ: Կրեդիտորական պարտքեր առկա չեն:

Ծառայության և բանկերի միջև հաստատված փոխադարձ հաշվարկների ակտերի համաձայն միանվագ վճարումների մասով բանկերին փոխանցված գումարների մնացորդը՝

- 01.01.2024 թվականի դրությամբ կազմել է 40,882.3 հազ. դրամ,
- 31.12.2024 թվականի դրությամբ՝ 48,500.0 հազ. դրամ, որոնք Հ-4

հաշվետվությամբ որպես տարեսկզբի և տարեվերջի դեբիտորական պարտքեր արտացոլված չեն:

«Հայփոստ» ՓԲԸ-ին փոխանցված գումարների մասով տարվա սկզբի դրությամբ 36,522.5 հազ. դրամ մնացորդը, որը ՓԲԸ-ի կողմից վերադարձվել է 09.01.2024 թվականին, Հ-4 հաշվետվությամբ նույնպես չի արտացոլվել որպես տարեսկզբի դեբիտորական պարտք:

Դեբիտորական պարտքերի ձևավորումը, հաշվառումը և մարումները կազմակերպվում է նաև տարածքային կենտրոնների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա: Տվյալները, Ծառայության 49 տարածքային կենտրոնների կողմից ըստ ամիսների (այնուհետև՝ յուրաքանչյուր եռամսյակի համար) ներկայացվել են Ծառայություն՝ շրջաբերականով սահմանված ձևաչափին համապատասխան:

Նշված հաշվետվությունների հիման վրա կազմված ամփոփ տեղեկատվության համաձայն, վերադարձման ենթակա գումարը 2024 թվականի տարվա սկզբի դրությամբ կազմել է 53,442.5 հազ. դրամ, որը նույնպես ձևակերպված չէ որպես տարեսկզբի դեբիտորական պարտք:

Վերոգրյալ ցուցանիշները ճշտվել են Ծառայության կողմից ներկայացված պարզաբանումների/հիմնավորումների հիման վրա:

5.2.2. (1068-12002) «ԵՐԵՒԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏ» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ծառայության 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվետվության համաձայն՝ «Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» միջոցառման իրականացման համար 2024 թվականի պետական բյուջեով տարեկան պլանը կազմել է 21,783,200.0 հազ.դրամ, ճշտված պլանը՝ 21,183,200.0 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 20,032,400.0 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 20,032,379.8 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 20,032,179.8 հազ. դրամ: Դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 2,889.68 հազ. դրամ, իսկ տարեվերջին՝ 3,089.7 հազ. դրամ: Կրեդիտորական պարտքեր արտացոլված չեն:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ՝ Ծառայության և բանկերի միջև կնքված պայմանագրերի 5-րդ կետի համաձայն «...պայմանագրով նախատեսված ծառայությունը բանկի կողմից լիազոր մարմնին մատուցված է համարվում հաշվետու ամսվա ընթացքում վճարման արդյունքների մասին սույն պայմանագրի N 2 ձևով սահմանված տվյալներ պարունակող փոխադարձ հաշվարկների ակտի հաստատման պահից»:

Փոխադարձ հաշվարկների ակտերի համաձայն, 01.01.2024 թվականի դրությամբ բանկերին փոխանցված գումարի մնացորդը կազմել է 622,999.8 հազ. դրամ, որը որպես տարեսկզբի դեբիտորական պարտք Հ-4 հաշվետվությամբ չի արտացոլվել:

Տարեվերջի դրությամբ բանկերում առկա դրամական միջոցների մնացորդը, համաձայն փոխադարձ հաշվարկների ակտերի, կազմել է 330,232.7 հազ. դրամ, որը նույնպես հաշվետվությամբ չի արտացոլվել որպես տարեվերջի դեբիտորական պարտք:

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

Երեխայի ծննդյան միանվագ նպաստ ծրագրի և միջոցառման կետի չորրորդ պարբերություն տարեվերջի դրությամբ բանկերում առկա դրամական միջոցների մնացորդը՝ համաձայն փոխադարձ հաշվարկների ակտի, կազմում է 330,232.7 հազ. դրամ՝ 362,832.7 հազ. դրամի փոխարեն, որը կարտացոլվի առաջին կիսամյակի

հաշվետվությունում: Նշված ծրագրի գծով կրեդիտորական պարտավորություններ առկա չեն:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ ընդունվել է ի գիտություն, Ծառայության պարզաբանման հիման վրա վերը նշված ցուցանիշը ճշտվել է:

5.2.3. (1102-12001) «ՍՊԱՅԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ծառայության 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվետվության համաձայն «Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» միջոցառման շրջանակներում 2024 թվականի տարեկան և ճշտված պլանը կազմել է 44,527,100.0 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 44,458,900.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 44,415,713.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 44,415,707.5 հազ. դրամ: Դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 3,558.9 հազ. դրամ, հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ 3,564.6 հազ. դրամ: Կրեդիտորական պարտքեր արտացոլված չեն:

Ծառայության կողմից 2024 թվականի 12 ամիսների ընթացքում շահառուներին, ըստ վճարման ցուցակների, վճարվել է 44,432,297.5 հազ. դրամ կենսաթոշակ: Հ-2 հաշվետվությունում փաստացի ծախսն արտացոլվել է 44,415,707.5 հազ. դրամ, կամ 16,590.0 հազ. դրամով պակաս:

«Հայփոստ» ՓԲԸ-ին 28.12.2023 թվականին փոխանցվել է 8,133.2 հազ. դրամ, որը Հ-4 հաշվետվությամբ 01.01.2024 թվականի դրությամբ չի արտացոլվել որպես դեբիտորական պարտք:

Ծառայության և բանկերի միջև հաստատված «Միանվագ դրամական վճարների» փոխադարձ հաշվարկների ակտերի համաձայն՝ բանկերում տարեսկզբի մնացորդը կազմել է 1,625.4 հազ. դրամ, իսկ տարեվերջին 2,648.7 հազ. դրամ, սակայն նշված գումարները նույնպես չեն արտացոլվել Հ-4 հաշվետվությամբ որպես դեբիտորական պարտքեր:

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

Ծրագրի և միջոցառման գծով 2 պարբերությունում արձանագրված 12 ամիսների ընթացքում շահառուներին ըստ վճարման ցուցակների վճարվել է 44,432,297.5 հազ.դրամ, այս ցուցանիշի մեջ հաշվի չի առնվել Բանկերի կողմից ետ վերադարձված 14,802.6 հազ.դրամը, «Հայփոստ» ՓԲԸ-ից՝ ֆինանսավորված գումարներից ետ վերադարձը՝ 1,791.7 հազ.դրամը, որը ի դեպ արձանագրության մեջ նշվել է 1,781.7 հազ.դրամ 10,0 հազ. դրամով պակաս, այդ իսկ պատճառով ՏՏ վարչության և Ֆինանսական վարչության կողմից դիտվում է որպես տարբերություն ետ

վերադարձի չափով, որը չի կարող լինել խեղաթյուրում:

Այս հաշվարկի համար փաստացի ծախսի՝ 44,415,707.5 հազ. դրամի փոխարեն պետք է ընդունել դրամարկղային ծախսը՝ 44,415,713.2 հազ. դրամ:

$(44,432,297.5 + 10,0) + (14,802.6 + 1,791.7) = 44,415,713.2$ հազ. դրամ:

«...Ծառայության և բանկերի միջև հաստատված «Միանվագ դրամական վճարների» փոխադարձ հաշվարկների ակտերի համաձայն, բանկերում տարեվերջի մնացորդը արձանագրությամբ նշված 1,563.6 հազ. դրամի փոխարեն ընդունել 2,648.7 հազ. դրամ, որպես պարտավորություն այն կարտացույցի առաջին կիսամյակի հաշվետվությունում::

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի համապատասխան փաստաթղթերով՝ վճարման ցուցակներով կատարված իրական ծախսը **44,432,297.5** հազ. դրամ է (արտացույցված է նաև Ծառայության բացատրությամբ), որը 16,590.0 հազ. դրամով պակաս է Ծառայության Հ-2 հաշվետվությունում արտացույցված 44,415,707.5 հազ. դրամ նույն ցուցանիշից: Դրանով պայմանավորված Ծառայության Հ-4 հաշվետվությունում ճշտման ենթակա է նաև տվյալ ծրագրային միջոցառման դեբիտորական և/կամ կրեդիտորական պարտքերի ցուցանիշները:

Միաժամանակ, Ծառայության կողմից ներկայացված պարզաբանման հիման վրա «Միանվագ դրամական վճարների» մասով ճշտվել է տարեվերջի դեբիտորական պարտքի ցուցանիշը:

5.2.4 (1102-12003) «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ծառայության 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվետվության համաձայն «Աշխատանքային կենսաթոշակներ» միջոցառման տարեկան պլանը կազմել է 295,468,000.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 295,468,000.0 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 288,467,000.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 288,358,830.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 288,302,379.2 հազ. դրամ: Դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 109,048.9 հազ. դրամ, տարեվերջին՝ 165,499.7 հազ. դրամ: Կրեդիտորական պարտքեր արտացույցված չեն:

Ծառայության կողմից 2024 թվականի 12 ամիսների ընթացքում շահառուներին, ըստ վճարման ցուցակների, վճարվել է 288,551,346.0 հազ. դրամ կենսաթոշակ: «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» օրինակելի ձև Հ-2 հաշվետվությունում (այսուհետ՝ Հ-2

հաշվետվություն) փաստացի ծախսն արտացոլվել է 288,302,379.2 հազ. դրամ, կամ 248,966.8 հազ. դրամով պակաս:

Բացի այդ, 28.12.2023 թվականին «Հայփոստ» ՓԲԸ-ին փոխանցվել է 105,684.2 հազ. դրամ, որը 01.01.2024 թվականի դրությամբ որպես դեբիտորական պարտք Հ-4 հաշվետվությամբ չի արտացոլվել:

Ծառայության և բանկերի միջև հաստատված «Միանվագ դրամական վճարների» փոխադարձ հաշվարկների ակտերի համաձայն՝ բանկերում տարեսկզբի մնացորդը կազմել է 19,697.8 հազ. դրամ, իսկ տարեվերջին 13,807.7 հազ. դրամ, սակայն նշված գումարները որպես դեբիտորական պարտքեր չեն արտացոլվել Հ-4 հաշվետվությամբ:

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

«Հաշվեքննության ընթացքում նկատված տարբերությունը ամբողջությամբ պայմանավորված է չծախսված (վերադարձված) գումարների ճիշտ հաշվարկմամբ:

Նշված ծրագրի և միջոցառման 2 պարբերությունում արձանագրված 12 ամիսների ընթացքում շահառուներին ըստ վճարման ցուցակների վճարվել է 288,551,346.0 հազ.դրամ, այս ցուցանիշի մեջ հաշվի չի առնվել բանկերի կողմից ետ վերադարձված 177,426.6 հազ. դրամը, «Հայփոստ» ՓԲԸ-ից Լեռնային Ղարաբաղին ֆինանսավորված գումարներից ետ վերադարձը՝ 13,843.8 հազ. դրամը և «Հայփոստ» ՓԲԸ-ից ակտերում չներառված 1,245.6 հազ. դրամը: Այս հաշվարկի համար փաստացի ծախսի՝ 288,302,379.2 հազ. դրամի փոխարեն պետք է ընդունել դրամարկղային ծախսը՝ 288,358,830.0 հազ. դրամը $(288,551,346.0 - (177,426.6 - 13,843.8 - 1,245.6) = 288,358,830.0$ հազ.դրամ):

(...) Միանվագ վճարների գծով բանկերում տարեվերջի մնացորդ գումարները՝ 13,807.7 հազ.դրամը, որպես պարտավորություն կարտացոլվի առաջին կիսամյակի հաշվետվությունում»:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով՝ վճարման ցուցակներով կատարված իրական ծախսը 288,551,346.0 հազ. դրամ է (արտացոլված է նաև Ծառայության բացատրությամբ), որը 248,966.8 հազ. դրամով պակաս է Ծառայության Հ-2 հաշվետվությունում արտացոլված 288,302,379.2 հազ. դրամ նույն ցուցանիշից: Դրանով պայմանավորված Ծառայության Հ-4 հաշվետվությունում ճշտման ենթակա է նաև տվյալ ծրագրային միջոցառման դեբիտորական և/կամ կրեդիտորական պարտքերի ցուցանիշները:

5.2.5 (1082-12002) «ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ծառայության 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվետվության համաձայն տարեկան և ճշտված պլանը կազմել է 16,840,700.0 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 16,840,700.0 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը) և փաստացի ծախսը՝ 16,840,502.2 հազ. դրամ: Տարեսկզբի և տարեվերջի դեբիտորական պարտքերը կազմել են 24.5 հազ.-ական դրամ: Կրեդիտորական պարտքեր արտացոլված չեն:

Ծառայության և բանկերի միջև հաստատված «Միանվագ դրամական վճարների» փոխադարձ հաշվարկների ակտերի համաձայն բանկերում տարեսկզբի մնացորդը կազմել է 100,501.7 հազ. դրամ, իսկ տարեվերջին 54,771.9 հազ. դրամ, սակայն նշված գումարները չեն արտացոլվել <-4 հաշվետվությամբ որպես դեբիտորական պարտքեր:

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

Ծառայությունը համաձայն է ներկայացված թվային ճշգրտման հետ: Իրականում, տվյալ ծրագրի շրջանակում 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերում առկա էր 54,771.9 հազ. դրամ չվճարված գումար: Հաշվեքննությամբ մատնանշված ավելի բարձր թիվը (54,944.6 հազ. դրամ) պայմանավորված էր նախնական հաշվարկային փաստաթղթերում արտացոլված, սակայն հետագայում ճշգրտված գումարի ներառմամբ: Այս մնացորդը 2025թ. առաջին կիսամյակի հաշվետվությունում կարտացոլվի որպես պարտավորություն՝ քանի որ խոսքը շահառուներին դեռևս չփոխանցված, բայց ծրագրի շրջանակում ֆինանսավորված գումարի մասին է:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ ընդունվել է ի գիտություն: Միաժամանակ Ծառայության բացատրության հիման վրա ճշտվել է համապատասխան ցուցանիշը:

5.2.6 (1205-12001) «ԾԵՐՈՒԹՅԱՆ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ, ԿԵՐԱԿՐՈՂԻՆ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՆՊԱՍՏՆԵՐ» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ծառայության 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվետվության համաձայն տարեկան պլանը կազմել է 46,274,700.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 47,803,700.0 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 47,547,300.0 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 47,506,901.4 հազ. դրամ և փաստացի ծախսը՝ 47,503,341.9 հազ. դրամ: Տարեսկզբի դեբիտորական պարտքը կազմել է 12,532.7 հազ. դրամ, տարեվերջին՝ 16,092.3 հազ. դրամ: Կրեդիտորական պարտքեր արտացոլված չեն:

Ծառայության և բանկերի միջև հաստատված «Միանվագ դրամական վճարների» փոխադարձ հաշվարկների ակտերի համաձայն՝ բանկերում տարեսկզբի մնացորդը կազմել է 2,068.0 հազ. դրամ, իսկ տարեվերջին 2,960.6 հազ. դրամ, սակայն նշված գումարները չեն արտացոլվել Հ-4 հաշվետվությամբ որպես դեբիտորական պարտքեր:

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

Ծառայության և բանկերի միջև հաստատված «Միանվագ դրամական վճարների» փոխադարձ հաշվարկների ակտերի համաձայն՝ բանկերում տարեվերջի մնացորդը 4,119.5 հազ. դրամի փոխարեն անհրաժեշտ է ընդունել 2,960.6 հազ. դրամը, որը որպես պարտավորություն՝ ևս կարտացոլվի առաջին կիսամյակի հաշվետվությունում:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ ընդունվել է ի գիտություն: Միաժամանակ Ծառայության բացատրության հիման վրա ճշտվել է համապատասխան ցուցանիշը:

5.3. (1011-12001) «ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂԱԾ ՆՊԱՍՏՆԵՐ» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Հաշվեքննությամբ արձանագրվել է..

5.3.1. Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի թիվ 145-Ն որոշման 3-րդ հավելվածով հաստատված կարգի¹⁰ 36-րդ և 43-րդ կետերի պահանջների նկատմամբ: Համաձայն 36-րդ կետի՝ Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) համար ներկայացված փաստաթղթերը տեսաներաժվում են, և լուսապատճեններ չեն պահանջվում, իսկ 43-րդ կետի՝ սոցիալական գործը կազմվում է նաև էլեկտրոնային տարբերակով, որի մեջ տեսաներաժվում են դիմողի ներկայացրած բոլոր փաստաթղթերը:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Երևան քաղաքի Էրեբունի-Նուբարաշեն և Մալաթիա-Սեբաստիա տարածքային կենտրոններում նշված փաստաթղթերը չեն տեսաներաժվում և էլեկտրոնային տարբերակով սոցիալական գործ չի կազմվում:

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

Արձանագրվածը Ծառայության կողմից ընդունվում է մասամբ, քանի որ

¹⁰ Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) կարգը

Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում որևէ փաստաթուղթ կցելու կամ տեսաներձանելու (ներբեռնելու) տեխնիկական հնարավորություն ապահովված չէ, քանի որ Ընտանիքների անապահովության գնահատման գործող ծրագրային ապահովությունը 1997թ. Access համակարգ է՝ սահմանափակ տեխնիկական հնարավորություններով:

Ծրագրային ապահովության արդիականացման անհրաժեշտության վերաբերյալ խնդիրները բազմիցս քննարկվել են լիազոր մարմնի հետ, որի արդյունքում 2026թ. հունվարի 1-ին Ընտանիքների անապահովության գնահատման նոր տեղեկատվական համակարգի գործարկմամբ կվերացվեն առկա տեխնիկական խնդիրները:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ ընդունվել է ի գիտություն:

5.3.2. Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի թիվ 145 որոշման 6-րդ հավելվածով հաստատված կարգի¹¹ 12-րդ կետի պահանջների նկատմամբ, որի համաձայն՝ «12. Գնահատման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա ստացված տեղեկատվությունը (սոցիալական անձնագրերի համարները և նպաստի տեսակը) տեղակայվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ծառայության պաշտոնական կայքէջերում»:

Նշված որոշման 8-րդ հավելվածով հաստատված կարգի¹² 9-րդ կետով սահմանվել է, որ՝ «9. Նպաստ նշանակելու կամ մերժելու որոշման մասին դիմողն իրազեկվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ծառայության պաշտոնական կայքէջերում տեղակայված տեղեկատվությունից»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ նշված որոշմամբ սահմանված տեղեկատվությունները՝ սոցիալական անձնագրերի համարները, նպաստի տեսակը, նպաստ նշանակելու կամ մերժելու որոշումները, հաշվեքննության ժամանակաշրջանում Նախարարության և Ծառայության կայքէջերում տեղակայված չեն:

¹¹ Ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայի ստեղծման, ձևավորման, անհատական տվյալների՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ծառայության տարածքային կենտրոնների, Հայաստանի Հանրապետության նախարարությունների, այլ պետական մարմինների և կազմակերպությունների միջև փոխանակման կարգ

¹² Ընտանեկան կամ սոցիալական նպաստի կամ հրադապ օգնության նշանակման և վճարման կարգ

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

Ծառայությունը համաձայն է դիտարկման հետև և ընդգծում է, որ արդեն իսկ նախաձեռնվել են քայլեր նշված խնդիրները կարգավորող իրավական դաշտը կատարելագործելու ուղղությամբ: Մասնավորապես, Ծառայությունը ֆինանսական և սոցիալական աջակցության գործընթացների շրջանակում իրավասու պետական մարմիններ կայացրել է առաջարկներ՝ վերանայելու կամ ուժը կորցրած ճանաչելու այն իրավական նորմերը, որոնք գործնականում այլևս արդյունավետ չեն կամ տեխնիկական իրականացման խնդիրներ ունեն:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ ընդունվել է ի գիտություն:

5.4 (1068-12004) «ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ 3 ԵՎ ԱՎԵԼԻ ԵՐԵՄԱ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ծառայության 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվետվության համաձայն տարեկան պլանը կազմել է 17,406,700.0 հազ.դրամ, ճշտված պլանը՝ 18,206,700.0 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 18,016,851.8 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 18,016,426.8 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 18,016,426.8 հազ. դրամ: Ըստ այդ հաշվետվությունների դեբիտորական և կրեդիտորական պարտքեր առկա չեն:

5.4.1. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2169-Լ որոշմամբ հաստատված կարգի¹³ 21-րդ կետի պահանջի նկատմամբ, որի համաձայն՝ «21. Դրամական աջակցություն նշանակելու դիմումը ներկայացվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, տարածքային բաժինը ճշտում է ներկայացված տվյալների հավաստիությունը և որոշում է ընդունում նշանակել դրամական աջակցություն կամ մերժել դրամական աջակցության նշանակումը՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցելով ծնողին՝ մերժման դեպքում նշելով մերժման պատճառը»:

«Կենսաթոշակառուների հաշվառման միասնական ՏՀ¹⁴»-ի շահառուների 92 գործի հաշվեքննությամբ պարզվել է, որ 27 դեպքում որոշումները ընդունվել են վերը նշված որոշմամբ սահմանված ժամկետից մինչև 95 օր ուշացումներով:

¹³ Ընդունվել է 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցություն նշանակելու և վճարելու կարգ

¹⁴ Տեղեկատվական համակարգ

5.4.2. Առկա է անհամապատասխանություն վերը նշված Կարգի 32-րդ կետի պահանջի նկատմամբ, որի համաձայն՝ «32. Եթե դրամական աջակցության վճարումը դադարեցվել է, ապա չվճարված դրամական աջակցության գումարը վճարվում է դիմելու կամ դրամական աջակցության վճարելը վերսկսելու (դրամական աջակցություն ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք համարվող տեղեկատվությունն ստացվելու ամսվան նախորդող 6 ամսվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում ծնողը դրամական աջակցություն ստանալու իրավունք է ունեցել»:

Նշված Կարգի՝ 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված է, որ դրամական աջակցություն ստանալու իրավունքը դադարում է ծնողին 6 ամիս անընդմեջ դրամական աջակցությունը չվճարելու դեպքում, իսկ Կարգի 28-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված է, որ՝ դրամական աջակցություն ստանալու իրավունքը վերականգնվում է դրամական աջակցություն ստանալու իրավունքը սույն կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված հիմքով դադարելու դեպքում՝ գրավոր դիմելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Ծառայության 49 տարածքային կենտրոններից 20-ում դրամական աջակցություն ստանալու իրավունքը դադարեցված 34 շահառուներին, բացի դրամական աջակցություն ստանալու իրավունքը վերականգնված ամսվա գումարից, վճարումներ են կատարվել նաև դրամական աջակցություն ստանալու իրավունքը վերականգնելու համար հիմք հանդիսացող տեղեկատվությունն ստացվելու ամսվան նախորդող 6 ամսից ավելի ամիսների համար, որի արդյունքում ավել է վճարվել 3,900.0 հազ. դրամ գումար (աղյուսակ 2):

**Տեղեկատվություն
Ավելի վճարված գումարների վերաբերալ**

Աղյուսակ 2

Հ/Հ	Տարածքային Բաժնի կողմ	Տարածաշրջանի անվանումը	Ավելի վճարված գումարներ		
			Շահառուների գործերի քանակը (հատ)	Վճարված գումարը (հազ դրամ)	Ավելի վճարված գումարը (հազ դրամ)

1	14	Արարատ, Արտաշատ	1	450.0	100.0
2	16	Արագածոտն, Աշտարակ	3	1,300.0	250.0
3	18	Սյունիք, Գորիս	1	450.0	100.0
4	26	Լոռի, Վանաձոր	2	1,000.0	300.0
5	27	Սյունիք, Կապան	1	450.0	100.0
6	30	Արմավիր	3	1,300.0	250.0
7	33	Կոտայք, Հրազդան	1	550.0	200.0
8	36	Լոռի, Սպիտակ	2	1,000.0	300.0
9	46	Շիրակ, Ամասիա	1	400.0	50.0
10	48	Շիրակ, Անի	1	500.0	150.0
11	51	Արարատ, Վեդի	3	1,450.0	400.0
12	55	Շիրակ, Ախուրյան	1	550.0	200.0
13	58	Գեղարքունիք, Վարդենիս	1	400.0	50.0
14	67	Տավուշ, Իջևան	1	700.0	350.0
15	264	Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Արաբկիր	2	950.0	250.0
16	269	Երևան, Շենգավիթ	1	400.0	50.0
17	271	Երևան, Աջափնյակ	4	1,700.0	300.0
18	273	Երևան, Կենտրոն	1	400.0	50.0
19	282	Երևան, Ավան	1	550.0	200.0
20	290	Երևան, Մալաթիա-Սեբաստիա	3	1,300.0	250.0
ԸՆԴԱՄԵՆԸ			34	15,800.0	3,900.0

Ծառայության առարկությունը, բացատրությունը 5.4.1. և 5.4.2. կետերի վերաբերյալ.

«(...) ավել վճարված գումարների գոյացումը հիմնականում պայմանավորված է

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ | 2025

շահառուների կարգավիճակի փոփոխություններով, որոնք ազդել են նպաստի իրավունքի վրա: Ծառայությունը նշում է, որ հաշվեքննությամբ մատնանշված 3,900.0 հազ. դրամ վճարված գումարները ավել վճարում դիտարկելու և այն վերադարձնելու գործընթացը դեռևս գտնվում է քննարկման փուլում: Հաշվեքննողի դիտարկումն ընդունվում է ի գիտություն և սույն կետերով մատնանշված անհամապատասխանությունների վերաբերյալ մանրամասն պարզաբանումները (տեղեկությունները) ներկայացվում են Հավելված 2 և Հավելված 3 լրացված ձևաչափերով»:

Ինչ վերաբերում է ընտանիքում 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ Թ.Ա.Մ-ին նշանակված դրամական աջակցության թիվ 0512207625824 գործով արձանագրված անհամապատասխանությանը, ապա հարկ է նշել հետևյալը.

շահառու երեխան՝ Ա.Ա.Պ-ը ՀՀ-ից ելք է կատարել 29.08.2022թ. և ՀՀ կրկին մուտք է գործել 15.06.2023 թ., այսինքն՝ 6 ամսից ավելի ժամկետով բացակայել է ՀՀ-ից, արդյունքում՝ ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի թիվ 2169-Լ որոշմամբ հաստատված կարգի (հավելված 1) 25-րդ կետի 6-րդ ենթակետի հիմքով 01.03.2023թ.-ից դադարեցվել է Թ. Մ-ի դրամական աջակցություն ստանալու իրավունքը:

Թ. Մ-ին ավել վճարված 2023թ. մարտ, ապրիլ և մայիս ամիսների դրամական աջակցության գումարը՝ 150000 դրամը քաղաքացու կողմից ամբողջությամբ վերականգնվել է ՀՀ պետական բյուջե (անդորրագիրը կցված է 15.12.2023թ. թիվ 051-0938054 դիմումին):

Միաժամանակ, Թ. Մ-ի 08.08.2023թ. թիվ 051-0889414 դիմումի և Ծառայության համապատասխան եզրակացության և գործող իրավակարգավորման (վերոնշյալ կարգի 28-րդ կետի 3-րդ ենթակետ) հիմքով՝ երեխայի ՀՀ վերադառնալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից՝ 01.07.2023թ.-ից, վերականգնվել է Թ. Մ-ի դրամական աջակցություն ստանալու իրավունքը: Ընդ որում, 2023 թ. հուլիս-դեկտեմբեր և 2024 թ. հունվար-մարտ ամիսների չվճարված դրամական աջակցության գումարը՝ 450.000 դրամի չափով, վճարվել է 2024թ. ապրիլ ամսվա դրամական աջակցության վճարման ցուցակներով՝ տվյալ ամսվա դրամական աջակցության հետ միասին՝ 500000 դրամ ընդհանուր գումարով, որն իրավաչափ է:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Ավել վճարված՝ 3,900.0 հազ. դրամ գումարները քննարկման փուլում գտնվելու վերաբերյալ Ծառայության պարզաբանումը (հավելված 3) ընդունվել է ի գիտություն:

Ինչ վերաբերվում է 5.4.1 կետով արձանագրված դրամական աջակցություն նշանակելու դիմումը ներկայացվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում որոշում ընդունելու համար սահմանված ժամկետների ուշացումներին, ապա Ծառայության կողմից Հավելված 2-ով ըստ էության պարզաբանվել են ուշացումների պատճառները:

Միաժամանակ, հարկ է նշել, որ Թ. Մ-ին 2023թ. մարտ-մայիս ամիսներին ավել վճարված 150000 դրամը 2023 թվականի դեկտեմբերին ՀՀ պետական բյուջե վերականգնված գործարքի նկատմամբ հաշվեքննողի կողմից հաշվեքննություն չի իրականացվել, հաշվի առնելով, որ տվյալ ժամանակաշրջանը չի ընդգրկվում հաշվեքննությունն ընգրկող ժամանակաշրջանի մեջ:

2024 թվականի ապրիլին 500.0 հազ. դրամ վճարված գումարի իրավաչափության վերաբերյալ հարկ է նշել, հետևյալը՝

ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2169-Լ որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված է, որ դրամական աջակցություն ստանալու իրավունքը դադարում է ծնողին 6 ամիս անընդմեջ դրամական աջակցությունը չվճարելու դեպքում, իսկ Կարգի 28-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված է, որ՝ դրամական աջակցություն ստանալու իրավունքը վերականգնվում է դրամական աջակցություն ստանալու իրավունքը սույն կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված հիմքով դադարելու դեպքում՝ գրավոր դիմելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Նույն Կարգի **32-րդ կետի** համաձայն՝ «32. Եթե դրամական աջակցության վճարումը դադարեցվել է, ապա չվճարված դրամական աջակցության գումարը վճարվում է դիմելու կամ դրամական աջակցության վճարելը վերսկսելու (դրամական աջակցություն ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք համարվող տեղեկատվությունն ստացվելու ամսվան նախորդող 6 ամսվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում ծնողը դրամական աջակցություն ստանալու իրավունք է ունեցել»:

Հաշվեքննության ենթարկելով նշված շահառուի «Կենսաթոշակառուների հաշվառման միասնական ՏՀ»-ում գործը, պարզվել է, որ շահառուին 2023 թվականի հունիս ամսվանից մինչև 2024 թվականի մարտ ամիսը (10 ամիս) անընդմեջ վճարումներ չեն կատարվել: Բացի այդ, «Կենսաթոշակառուների հաշվառման միասնական ՏՀ»-ում բացակայում է դրամական աջակցություն ստանալու իրավունքը վերականգնվելու վերաբերյալ շահառուի գրավոր դիմումը:

5.5. (1102-12003, 1102-12001) «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՍՊԱՅԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Հաշվեքննության արձանագրվել է.

5.5.1 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 665-Ն (ՀՀ կառավարության 10.03.2016թ. թիվ 247-Ն որոշման խմբագրությամբ) որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 12-րդ կետի 1-ին ենթակետի և 12.4-րդ կետի պահանջների նկատմամբ, համաձայն որի՝

«12. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումն անձի դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, ըստ անհրաժեշտության ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը և որոշում է՝ «1) կենսաթոշակը նշանակել, կենսաթոշակը նշանակել և տեղեկացնել կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին, վերահաշվարկել կամ կենսաթոշակ նշանակելը, վերահաշվարկելը մերժել, կամ կենսաթոշակի տեսակը փոխել, կամ կենսաթոշակի տեսակը փոխելը մերժել»,

«12.4. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումն անձին կենսաթոշակ նշանակելու և լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում ընդունելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով, թե ինչ լրացուցիչ փաստաթուղթ պետք է ներկայացնի»:

Հաշվեքննության ենթարկված 69 գործերից մեկում արձանագրվել է, որ կենսաթոշակառուի էլեկտրոնային գործում բացակայում է քաղաքացու աշխատանքային գրքույկում նշված՝ 29.04.1989-10.11.1993թթ. ժամանակաշրջանից՝ 01.01.1992-10.11.1993թթ. (1 տարի 10 ամիս 11 օր) ընդգրկող ժամանակահատվածի աշխատանքային ստաժի հիմնավորման համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ գրավոր ծանուցումը, ինչպես նաև կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից ստաժի ճշտման վերաբերյալ տեղեկատվությունը, որի արդյունքում էլ պակաս է հաշվարկվել աշխատանքային ստաժը:

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

Վ. Խ. 08.08.2016թ. կենսաթոշակ նշանակելու համար դիմում է ներկայացրել համապատասխան տարածքային բաժին: Տվյալ պահին գործող իրավակարգավորումների համաձայն՝ քաղաքացին անձամբ է ներկայացրել կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Հարկ է նշել, որ պայմանավորված Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 1082-Ն որոշման իրավակարգավորումներով լրացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի

5-ի թիվ 665-Ն արաշման հավելված 1-ի 15.1-ին կետը, համաձայն որի՝ եթե կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու կամ այլ դեպքերի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտով սահմանված է արխիվային տեղեկանքներ կամ արխիվային տվյալներ (տեղեկություններ) պարունակող այլ փաստաթղթեր (այսուհետ՝ արխիվային փաստաթուղթ) ներկայացնելու անհրաժեշտություն, սակայն դրանք համապատասխան դիմումին կից չեն ներկայացվում, ապա արխիվային փաստաթուղթը «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից (այսուհետ՝ ազգային արխիվ) ստանում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ համապատասխան հարցում կատարելու միջոցով...:

Միաժամանակ, տեղեկացվում է նաև, որ կազմակերպության (Գուգարք բնակչահագործման տեղամասի) մասին տեղեկատվությունը բացակայում է Ծառայության կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում հաշվառված ապահովագրողներին և նրանց կատարած սոցիալական վճարներին վերաբերող ապահովագրողների հաշվառման գրանցամատյաններում և էլեկտրոնային տվյալների բազայում:

Այնուհետև, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 268-Ն որոշման իրավակարգավորումների հիմքով կրկին փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված կարգի հավելված 1-ում, համաձայն որի՝ լրացվել է 14.5-րդ կետը: Նշված կետով սահմանվել է, որ մինչև 1996 թվականի նոյեմբերի 10-ը, իսկ Լեռնային Ղարաբաղի տարածքում՝ մինչև 1998 թվականի հունվարի 19-ը աշխատած ժամանակահատվածի համար սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում, եթե անձն աշխատել է քաղաքային, շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներում, դրանց ենթակա դպրոցներում, գրադարաններում, բնակչահագործման (բնակարանային շահագործման) գրասենյակներում (տեղամասերում, տնտեսություններում):

Ուստի, խնդրո առարկա ժամանակահատվածը՝ վերոնշյալ իրավական ակտերի փոփոխության հիմքով, Վ.Խ. աշխատանքային ստաժում հաշվարկելու հարցը կարող է քննության առնվել վիճինիս կողմից Ծառայության ցանկացած տարածքային կենտրոնում կենսաթոշակը վերահաշվարկելու մասին դիմումը ներկայացնելու դեպքում:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Արձանագրությունում նշված է, որ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը չի ճշտել քաղաքացու աշխատանքային գրքույկում նշված՝ 29.04.1989-10.11.1993թթ. ժամանակաշրջանից՝ 01.01.1992-10.11.1993թթ. (1 տարի 10 ամիս 11 օր) ընդգրկող ժամանակահատվածի աշխատանքային ստաժը: Հարկ է նշել, որ կենսաթոշակ

նշանակելու պահին գործող վերը նշված որոշման դրույթների համաձայն, Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումն անձին կենսաթոշակ նշանակելու և լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին գրավոր ծանուցում է քաղաքացուն: Սակայն էլեկտրոնային շտեմարանում առկա կենսաթոշակառուի էլեկտրոնային գործին «կից ֆայլեր»-ում բացակայում են հիշյալ ծանուցումը, ինչպես նաև՝ Ծառայության կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում հաշվառված ապահովագիրներին և նրանց կատարած սոցիալական վճարներին վերաբերող ապահովագիրների հաշվառման գրանցամատյաններում և էլեկտրոնային տվյալների բազաներում շահառուի աշխատանքային գրքույկում նշված (29.04.1989-10.11.1993թթ.) ժամանակաշրջանում աշխատավայրի տվյալների բացակայության վերաբերյալ գրառումներ:

5.5.2. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 665-Ն որոշման հավելված 2-ով հաստատված կանոնների¹⁵ 4-րդ կետի պահանջների նկատմամբ, որի համաձայն՝ «Կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս)՝ աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչև 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ»:

Կենսաթոշակների 69 գործի հաշվեքննությամբ արձանագրվել է, որ՝

ա) մեկ դեպքում (կենսաթոշակառու Ֆ.Մ.Ղ., գործի համար 2711608529104) աշխատանքային գրքույկում նշված **01.06.1979**-14.05.1982թթ. ժամանակահատվածի ստաժը գրանցվել և հաշվարկվել է 3 ամիս պակաս ժամկետով՝ **01.09.1979**-14.05.1982թթ. ինչի հետևանքով ընդհանուր աշխատանքային ստաժը հաշվարկվել է 32 տարի 5 ամիս 15 օր, իսկ կենսաթոշակի չափ է սահմանվել 49,010 դրամ: Վերահաշվարկի արդյունքում պարզվել է, որ աշխատանքային ստաժը կազմում է 32 տարի 8 ամիս 13 օր կամ 3 ամիս ավելի, որի պարագայում կենսաթոշակի չափը կազմում է 49,830 դրամ կամ 820 դրամով ավելի:

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

Ֆ.Մ.-ի՝ 32 տարի 5 ամիս 15 օր տարվա աշխատանքային ստաժը ճիշտ է հաշվարկված, քանի որ Ֆ. Մ.-ը ունի համատեղությամբ աշխատած ժամանակահատվածներ, որոնք աշխատանքային ստաժում հաշվարկվում են ՀՀ

¹⁵ Կենսաթոշակ նշանակելու համար աշխատանքային ստաժը հաշվարկելու կանոններ

կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված կանոնների (հավելված 2) 5-րդ կետի իրավակարգավորումներով, այն է՝ աշխատանքային ստաժում հաշվարկվող աշխատանքային կամ այլ գործունեության (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից եկամուտ ստանալու) ժամանակահատվածները համընկնելու դեպքում հաշվառվում է դրանցից մեկը:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Հաշվեքննության ընթացքում աշխատանքային ստաժների վերահաշվարկման մեջ չեն ներառվել համատեղությամբ աշխատած ժամանակահատվածները: Վերահաշվարկված և Ծառայության կողմից հաշվարկված աշխատանքային ստաժների տարբերությունն առաջացել է Ծառայության կողմից շահառուի աշխատանքային գրքույկում գրառված **01.06.1979-14.05.1982թթ** աշխատաժամանակը շտեմարանում սխալ՝ **01.09.1979-14.05.1982թթ** ժամանակահատված մուտքագրելու հետևանքով, որի արդյունքում աշխատանքային ստաժը 3 ամիս պակաս է հաշվարկվել:

բ) մեկ դեպքում (զինվորական կենսաթոշակառու Մ. Մ. Լ., գործի համար 8412011735090) ՀՀ ՊՆ նախարարի կողմից ծառայությունից արձակման հրամանով ստաժը արտոնյալ հաշվարկով կազմել է 27 տարի 1 ամիս 3 օր, որի դեպքում կենսաթոշակի չափը կազմում է 158850 դրամ, սակայն էլեկտրոնային գործում ստաժը հաշվարկված է 26 տարի 4 ամիս 27 օր և կենսաթոշակի չափ է սահմանվել 157100 դրամ կամ 1750 դրամով պակաս:

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

Արձանագրվել է նաև 1 դեպքով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում նշանակված երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակառուի արտոնյալ պայմաններով հաշվարկված աշխատանքային ստաժի անճշտություն, և 13 դեպքով կենսաթոշակի գործերում պահանջվող փաստաթղթերի ոչ ամբողջական կցված լինելու հանգամանքը, սակայն անհրաժեշտ է նշել, որ խնդիրը դուրս է Ծառայության գործառույթներից:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 48.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Միասնական սոցիալական ծառայության լիազորություններից է. «(□□□) գործատուներից, պետական մարմիններից ու կազմակերպություններից,

(...) պահանջել կենսաթոշակ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, իսկ Կառավարության սահմանած դեպքում ստուգել դրանց հավաստիությունը»:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի մարտի 17-ի 37-Լ հրամանով հաստատվել է «Միասնական սոցիալական ծառայության կանոնադրություն»-ը, որի 3-րդ բաժնի 11-րդ կետի 46-րդ ենթակետի համաձայն՝ «Ծառայության գործառույթներից է՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով պարզել սոցիալական ծառայությունների տրամադրման, ... կենսաթոշակի և նպաստների, այլ վճարների նշանակման և վճարման համար ներկայացված տվյալների /փաստաթղթերի/ հավաստիությունը դրանք տրամադրած մարմիններում և կազմակերպություններում կամ տարածքային կենտրոնին հասանելի տեղեկատվական շտեմարանների միջոցով»:

5.5.3. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 665-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի¹⁶ 10-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների նկատմամբ, այն է՝ «10. Կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու) կամ կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելը դադարեցնելու և վերսկսելու դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելու ժամանակ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մասնագետը՝... 2) տեսաներածում է (սկանավորում է) փաստաթղթերի բնօրինակները և էլեկտրոնային լուսապատճենները մուտքագրում է շտեմարան»:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ կենսաթոշակների 69 գործից 13 զինվորական կենսաթոշակառուների էլեկտրոնային գործերի մի մասում անհրաժեշտ փաստաթղթերը (զորացրման հրամանի քաղվածքը, դրամական բավարարման վկայականը, ստաժի վերաբերյալ համապատասխան ստորաբաժանման տեղեկանքը և այլն) բացակայում են, իսկ որոշ դեպքերում՝ կցված են ոչ ամբողջական ցանկով:

Ծառայության առարկությունը, բացատրությունը.

Արձանագրվել է նաև 1 դեպքով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում նշանակված երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակառուի արտոնյալ պայմաններով

¹⁶ Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգ

հաշվարկված աշխատանքային ստաժի անճշտություն, և 13 դեպքով կենսաթոշակի գործերում պահանջվող փաստաթղթերի ոչ ամբողջական կցված լինելու հանգամանքը, սակայն անհրաժեշտ է նշել, որ խնդիրը դուրս է Ծառայության գործառույթներից:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ ներկայացված է 5.5.2 կետի բ) պարբերությամբ:

VI. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

6.1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի մարտի 17-ի թիվ 37-Լ հրամանի հավելվածով հաստատված՝ Ծառայության կանոնադրության 11-րդ կետի 46-րդ ենթակետով Ծառայության գործառույթներից է՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով պարզել կենսաթոշակի և նպաստների, այլ վճարների նշանակման և վճարման համար ներկայացված տվյալների (փաստաթղթերի) հավաստիությունը դրանք տրամադրած մարմիններում և կազմակերպություններում կամ հասանելի տեղեկատվական շտեմարանների միջոցով:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ՝

- 1998-2004 թվականներին իրականացվել է ոչ անձնավորված հաշվառում, որը տվյալների հավաստիության ռիսկ է պարունակում: Մասնավորապես, շտեմարաններում ոչ բոլոր ապահովագիրների վերաբերյալ են առկա տվյալներ: Առկա են միայն այն ապահովագիրների վերաբերյալ տեղեկատվություն, ովքեր նշված ժամանակահատվածում հաշվառվել են Ծառայության իրավանախորդ հանդիսացած Պետական կենսաթոշակային հիմնադրամի համապատասխան ստորաբաժանումներում և առկա են ապահովագիրների կողմից կատարած սոցիալական վճարներին վերաբերող տեղեկատվություն:

- 2004 թվականից մինչև 2013 թվականը ընկած ժամանակահատվածում շահագործվող «Պառնաս» հաշվառման տեղեկատվական շտեմարանում տվյալները հաշվառվել են անհատական և անձնավորված, սակայն նույնպես չեն պարունակում ամբողջական տեղեկատվություն:

VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

7.1. Հաշվեքննության ընթացքում գնահատվել է Ծառայությունում 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությամբ ներկայացված առաջարկությունների իրականացման առաջընթացը և պարզվել է, որ 4 առաջարկությունների իրականացման նպատակով Ծառայությունը կազմել և հաստատել է Միջոցառումների կատարման ժամանակացույց, համաձայն որի այդ աշխատանքները նախատեսված է իրականացնել 2025 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակներում:

VIII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությանն առաջարկվում է.

1. Հաշվապահական հաշվառումը վարել Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջներով՝ կիրառելով հաշվային պլանով սահմանված հաշվապահական հաշիվների թղթակցությունները, այդ համակարգում ներառելով նաև կենսաթոշակներին և սոցիալական նպաստներին վերաբերելի ֆինանսական հոսքերի, ֆինանսական վիճակի, զուտ ակտիվներում (սեփական կապիտալում) փոփոխությունների, հասույթների և ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունները:

2. Միջոցներ ձեռնարկել.

2.1. Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) համար ներկայացված փաստաթղթերը տեսաներածելու և էլեկտրոնային տարբերակով սոցիալական գործեր կազմելու ուղղությամբ,

2.2. Նպաստ նշանակելու կամ մերժելու մասին որոշումները Ծառայության կայքէջում տեղակայելու համար,

2.3. Սահմանված չափերից ավելի կամ պակաս հաշվարկված, վճարված սոցիալական նպաստների և կենսաթոշակների գումարները սահմանված կարգով գանձելու կամ վճարելու ուղղությամբ,

2.4. Զինվորական կենսաթոշակների էլեկտրոնային գործերում անհրաժեշտ փաստաթղթերն ամբողջականացնելու համար:

3. Մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը, այն տրամադրելով նաև Հաշվեքննիչ պալատին:

Ստորագրող
ՀԱԿՈԲ ՄԻՀՐԱՆՅԱՆ
1108660142

2025-05-21 16:25:17 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



ՀԱԿՈԲ ՄԻՀՐԱՆՅԱՆ

Հաշվեքննիչ պալատի անդամ

29 ապրիլ 2025 թվական

Հաշվեքննիչ պալատ

Բաղրամյան փող. 19, ք. Երևան
Հայաստանի Հանրապետություն